Մրցույթի հայտարարություն

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:
Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.
1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96:
Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի դեկտեմբերի 14-ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (033) 27-32-32, (093) 15-93-81 հեռախոսահամարներով:
Էլեկտրոնային հասցեն՝ statecollege@list.ru: